ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Դավիթ Խուդաթյանին

Դիմող՝

Ալբերտ Հարոյան

« Էկոպոլիս բնապահպանական կենտրոն» համայնքային

զարգացման և անվտանգության համար ՀԿ նախագահ

Բնակության հասցե ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան համայնք,

Մխիթարյան փողոց,  տուն 5

Հեռ.՝ +374 94 76 35 94

Էլ. փոստ՝ albertharoyan@gmail.com

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին

կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ

Հարգելի պարոն Խուդաթյան,

Հիմք ընդունելով ՀՀ ՏԿԵ նախարարության հայտարարությունը նախարարին կից հասարակական խորհրդի նոր կազմ ձևավորելու վերաբերյալ՝ ներկայացնում եմ իմ թեկնածությունն ընդգրկվելու հասարակական խորհրդի կազմում:

Ավելի քան 20 տարվա մասնագիտական գործունեության ընթացքում ներգրավված եմ եղել շրջակա միջավայրի կառավարման, քաղաքացիական հասարակության զարգացման, համայնքային զարգացման, անվտանգության և մասնակցային գործընթացների, բնապահպանական կրթության, թափոնների կառավարման, ինչպես նաև միջազգային գործընկերների հետ համագործակցության մի շարք ծրագրերում: Առ այսօր Դիլիջան համայնքում իրականացնում եմ Օրհուս կենտրոնի առաքելիության միտված գործառույթներ՝ համակարգելով Դիլիջանի Օրհուս կենտրոնը:

Ունեմ փորձ պետական կառույցների, ՏԻՄ-երի, միջազգային կազմակերպությունների (UNDP, UNICEF, FAO, EU, OSCE), ինչպես նաև տեղական հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքում, հասարակական մասնակցության խթանման, քաղաքականությունների մշակման գործընթացներին աջակցելու և շրջակա միջավայրի խնդիրների լուծմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման ոլորտներում:

Համոզված եմ, որ իմ փորձը, մասնագիտական գիտելիքներն ու համագործակցության լայն փորձառությունը կարող են օգտակար լինել հասարակական խորհրդի արդյունավետ գործունեության և նախարարության նպատակների իրականացման գործում՝ հատկապես քաղաքականությունների մշակման վերաբերյալ փորձագիտական ներդրումներ կատարելու, շահառու խմբերի մասնակցությունն ապահովելու և հանրային իրազեկումը բարձրացնելու ուղղությամբ:

Խնդրում եմ դիտարկել իմ թեկնածությունը և հնարավորություն ընձեռել մասնակցելու նախարարին կից հասարակական խորհրդի աշխատանքներին:

Կից ներկայացվում են.

Հայտին կից ներկայացվում են՝

1) կազմակերպության պետական գրանցման վկայական
2) կանոնադրության պատճենը
3) անձնագրի պատճեն
4) Իմ ինքնակենսագրականը

Շնորհակալ եմ դիմում- հայտի դիտարկման համար:

Սպասում եմ Ձեր արձագանքին:

Հարգանքով՝

Ալբերտ Հարոյան

26.11.2025թ